Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները քվեարկության օրը (15 հունիսի)

Ժամը 07:00-08:00

- ☐ Ընտրական տեղամասը բացելիս՝ հանձնաժողովի նախագահից ստացե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները և ցուցադրական արձանագրությունները:

- ☐ Քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունները փակցրե՛ք ընտրական տեղամասում բոլորի համար տեսանելի տեղում:

- ☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի առաջին և երկրորդ էջերում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ 10-րդ և հաջորդ էջերում ևս գրե՛ք ընտրական տեղամասը բացելիս քվեարկության շենքում գտնվող իրավասու անձանց (հանձնաժողովի անդամների, դիտորդների, ներկայացուցիչների) անունները և ազգանունները և խնդրե՛ք նրանց՝ շենքում գտնվելը ստորագրությամբ վավերացնել քվեարկության օրվա գործավարության մատյանում (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.ա):

- ☐ Հանձնաժողովի նախագահի կողմից հանձնաժողովի հատուկ կնիքի զմռսակնքված փաթեթը բացելուց հետո, տվյալ կնիքի համարը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 9-րդ էջում:

- ☐ Հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման նպատակով անցկացված վիճակահանության արդյունքները գրանցե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.զ)*:

- ☐ Բողոքների գրանցման գործընթացի դիտարկման նպատակով անցկացված վիճակահանությամբ բացահայտված ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների տվյալները գրանցե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:

- ☐ Ընտրողների ընդհանուր ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի և շարժական քվեատուփի ցուցակի մեջ առկա ընտրողների քանակը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ, 7-րդ էջերում, նաև 8-րդ կամ 9-րդ էջում՝ ընտրությունների տեսակին համապատասխան (քաղաքապետի կամ գամգեբելիի ընտրություններ), և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.9):*

- ☐ Ստացած ընտրական քվեաթերթիկների քանակը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ, 7-րդ էջերում, նաև 8-րդ կամ 9-րդ էջում՝ ընտրությունների տեսակին համապատասխան (քաղաքապետի կամ գամգեբելիի ընտրություններ), և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.9):

- ☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ և 9-րդ էջերում նշե՛ք ընտրողների գրացուցմս իրականացնողներից յուրաքանչյուրին փոխանցած կնիքի համարը:

- ☐ Ընտրական քվեատուփերի զմռսակնքման ժամանակը և ընտրական քվեատուփերի զմռսակնիքների անհատական համարները նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:

- ☐ Մինչև քվեարկությունը սկսվելը, հանձնաժողովի նախագահի հետ մեկտեղ լրացրե՛ք ստուգողական թերթի ինքնապատճենվող ձևը (բացառությամբ առաջին ընտրողի մասին տվյալների): Ուշադրությո՛ւն դարձրեք, որ ստուգողական թերթը ստորագրեն հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.10)*:

Ժամը 08:00-ից

- ☐ Ընտրական տեղամաս գալով՝ առաջին ընտրողն անցնում է գրանցումը և ստանում ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները: Դրանից հետո առաջին ընտրողի մասին տվյալները գրանցե՛ք ստուգողական թերթի վրա, ստորագրել տվե՛ք նրան և նշե՛ք ընտրական քվեատուփերի մեջ ստուգողական թերթերը գցելու ճշգրիտ ժամանակը: (ստուգողական թերթի տվյալները գրանցե՛ք գործավարության մատյանի 4-րդ էջում):

Ժամը 09:00-ից

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում նշե՛ք, թե որքան ընտրական քվեաթերթիկ և հատուկ ծրար է փոխանցվել շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 62.6)*:

Ժամը 12:00

☐ Ընտրողների գրանցում իրականացնողներից յուրաքանչյուրի հետ հաշվե՛ք ընտրողների ցուցակներում քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների քանակը և դրանց գումարը նշե՛ք գործավարության մատյանի 6-րդ, 7-րդ էջերում, նաև 8-րդ կամ 9-րդ էջում՝ ընտրությունների տեսակին համապատասխան (քաղաքապետի կամ գամգեբելիի ընտրություններ), և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում:

Ժամը 17:00

☐ Ընտրողների գրանցում իրականացնողներից յուրաքանչյուրի հետ հաշվե՛ք ընտրողների ցուցակներում քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների քանակը և դրանց գումարը նշեք գործավարության մատյանի 6-րդ, 7-րդ էջերում, նաև 8-րդ կամ 9-րդ էջում՝ ընտրությունների տեսակին համապատասխան (քաղաքապետի կամ գամգեբելիի ընտրություններ), և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում:

Մինչև ժամը 20:00-ն

☐ Շարժական քվեատուփը (այսպիսինի գոյության դեպքում) ընտրական տեղամաս վերադարձնելուց հետո՝ կտրե՛ք մնացած չօգտագործված ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների անկյունները, վրան գրե՛ք «վնասված է», և հանձնաժողովի նախագահի ստորագրելուց հետո, պահե՛ք առանձին, դրանց քանակը գրանցե՛ք գործավարության մատյանի 4-րդ էջում:

Ժամը 20:00-ից մինչև քվեատուփի բացումը

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում նշե՛ք ժամը 20:00-ի դրությամբ հերթում կանգնած ընտրողների քանակը:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում նշե՛ք հանձնաժողովի անդամների միջև հաշվողների գործառույթները վիճակահանությամբ բաշխելու արդյունքները:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում գրե՛ք ընտրական քվեաթերթիկները հաշվելու գործընթացի հսկման համար դիտորդներից վիճակահանությամբ բացահայտված հսկողների տվյալները:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում գրե՛ք վիճակահանությամբ բացահայտված ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների տվյալները, որոնք հաշվողների հետ մեկտեղ մասնակցում են իսկական (վավեր) կամ/և անվավեր ընտրական քվեաթերթիկները հաշվելու գործընթացին:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանում նշե՛ք ձայները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող անձանց ով լինելը:

☐ Ըստ ընտրողների միասնական ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) և շարժական քվեատուփի ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) հաշվողների կողմից բացահայտված քվեարկության մասնակից ընտրողների ընդհանուր քանակը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.3)*:

☐ Առանձին-առանձին փաթեթավորե՛ք և զմռսակնքե՛ք ընտրողների միասնական ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի, ինչպես նաև շարժական քվեատուփի (այսպիսինի գոյության դեպքում) ցուցակի սեղանի տարբերակները: Զմռսակնքած փաթեթների վրա ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հաշվողները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.3)*:

☐ **Գոյության դեպքում՝** հաշվառե՛ք այն դեպքերի թիվը, որոնք **վերաբերում են ընտրողի դեմքի և ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում /ընտրողների ցուցակում առկա լուսանկարների միմյանց հետ անհամապատասխանությանը,** և քվեարկության

օրվա գործավարության մատյանին կցված փաստաթղթերի քանակը: Տվյալները գրանցե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 29-րդ և հաջորդ էջերում, ինչից հետո զմռսակնքե՛ք տվյալ փաստաթղթերը: Զմռսակնքված փաթեթի վրա նշե՛ք ընտրական տեղամասի անվանումը և համարը, փաստաթղթերի տեսակը և ստորագրե՛ք *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.5[1])*:

☐ Կտրե՛ք չօգտագործված ընտրական քվեաթերթիկների անկյունը: Չօգտագործված և վնասված ընտրական քվեաթերթիկները կապե՛ք առանձին-առանձին փաթեթներով: Զմռսակնքված փաթեթների վրա ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հաշվողները (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.4):

Քվեատուփի բացումը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների կազմումը

☐ Քվեատուփը բացելուց հետո, հաշվողների կողմից հաշվված անվավեր ընտրական քվեաթերթիկների և ընտրական սուբյեկտների կողմից ստացած ձայների քանակությունները նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում (այլ ընտրական տեղամասի համար հատկացված անվավեր ընտրական քվեաթերթիկների քանակը նշվում է միայն քվեարկության օրվա գործավարության մատյանում) (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 69.6,8):

☐ Հանձնաժողովի նախագահի հետ ստուգե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների տվյալների ճշգրտությունը. ընտրական սուբյեկտների ստացած ձայների քանակը + անվավեր ընտրական քվեաթերթիկների քանակը = կամ < ընտրողների ստորագրությունների քանակ:

☐ Հաշվողների կողմից ձայները հաշվելու ընթացակարգն ավարտելուց հետո, հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ, լրացրե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 71.1)*: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները կազմելիս՝ պետք է նկատի առնված լինեն ընտրողների գրանցումն իրականացնողների բացատրագրերում (այսպիսինի գոյության դեպքում) նշված տվյալները: **Հիշե՛ք՝ արգելվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ տեղ գտած տվյալներն ուղղել** *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 70.3)*:

☐ Ստորագրե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները և հետևե՛ք, որ այն ստորագրեն հանձնաժողովի բոլոր անդամները: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները վավերացրե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքով և գրանցե՛ք գրանցամատյանի ելից փաստաթղթերի մասում *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 71.4)*:

☐ Քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո, փակե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանը և գրանցամատյանը, համապատասխան «Մատյանը փակված է» գրառումով, հաստատե՛ք Ձեր և հանձնաժողովի նախագահի ստորագրություններով, ինչից հետո դրանք վավերացրե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքով *(Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝* հոդված 11.15, Ընտրական օրենսգիրք՝ հոդված 62.11, 71.12):

Ի նկատի ունեցեք.

- Հանձնաժողովի անդամների վիճակահանությամբ սահմանված գործառույթներն այլ անդամների ժամանակավոր փոխանցման դեպքում, տեղեկությունը գրառե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 5-րդ էջում *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.է)*:
- Եթե նշմարումը ստուգելիս պարզվի, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրա ինքնությունը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:
- Գրանցամատյանում և քվեարկության օրվա գործավարության մատյանի 10-րդ և հաջորդ էջերում գրանցե՛ք բոլոր մտից դիմումները/բողոքները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 62.9)*:
- Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության պատճեն հատկացնելիս՝ պատճենը վավերացրե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքով և հանձնաժողովի նախագահի հետ այն ստորագրեք (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 71.8):
- Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններ ստանալը՝ ստացող անձինք ստորագրությամբ պետք է հավաստեն քվեարկության օրվա գործավարության մատյանում: